ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 9—11 ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ ՀԳ. ՏԱՐԻ 1959

ԵՒՍԵԲԵԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՄԵՍԱՅԻՈՅ ՃԱՌՔ

ԺԹ.

ՅԱԻԱՆԱԿՆ ԵՒ Ի ԴԱԻԻԹ

1· Վաղ ինչ, եղբարք, զկարգ բանից հետ եւ նախանձ բանին եհատ, որ հանապազ հակառակեալ ընդ աստուածեղէն բանին կռուի եւ միշտ յաստուածական չնորհացն եղծանի: Ընդդէմ գայ ոչ զի յաղթել կարող իցէ, որ ոչ եւ զզուգական կռիւն ի հանդիսի բաւէ ցուցանել· * այլ յիւրմէ ըստ իւրոց չարութեանցն դիմեալ լեանէ եւ յաստուածեղէն չնորհացն նահանջեալ պաշարի: Ծառվելանէ եւ լիքն մեղկի· եւ ամբոխելովքն ինքն կթաւսի: Որովք մարանչին, նոքիմբք հարկանի· եւ որովք նեռաձիգ, նեռաթափ լինի, նոքիմբք նեռս եւ պրս առեալ սատակի եւ անդստին յիւրոց գինուց հաչի:

2· Քանզի ոչ եթէ զկն առնու Աստուած, առ չարութեանց ախոյան, այլ զնորին զկնան առնէ նմին խոցոտիչ· ըստ այնմ, զոր երանելի Դաւիթն ասէր զչարակեցիկ մարդկանէ եւ զվնասակար, եթէ «սուրքն նոցա մտցեն ի սիրտս նոցա· եւ աղեղունք նոցա խորեթէ «սուրքն նոցա մտցեն ի սիրտս նոցա· եւ աղեղունք նոցա խորտակեսցին»: Եւս զՏէրն փրկիչ եւ զԱստուածն կենարար թշնամին ճշմարտութեան քարոզեալ եւ խռովեցաւ: Եւ զոր աւրինակ լինէր զնմանէ պատմեալ ասացեալ ի մարգարէէն Եսայեայ, զնոյն եւ ինքն արար: Զի որպէս նա ասէր· «զի՞ կայ մեր եւ քո, Որդի Աստուծոյ, եկեր չաստեալ ազաղակ

ծոյ», ոչ առ ի զարմանալ, այլ առ ի խոովեցուցանել զլսաւղս, նոյնպէս եւ այժմ անոսի համբաւուք կամեցաւ խոովեցուցանել զհէրոնական քարոզութեանն լսաւղս:

3· Եւ չէ ինչ գործն աւտար, քան զի ոչ եթէ միայն զմեր զուգականս, այլեւ զայնպիսի հաւատացելոց արանց եւ մեծամեծաց եւ պիտանեաց, առ առաքելովքն աշակերտելոցն խափանեաց զյաւժարութիւն· ըստ այնմ թէ «բազում անգամ յաւժարեցի զալ առ ձեզ, եւ խափանեաց զմեզ սատանայ»: Ոչ եթէ զԱստուծոյ բանն խափանել կարէր, այլ յիւրմէ իւրովք չարութեամբքն գուն *գործեալ զիմէր, առեալ աւճան յԱստուծոյ ի թողացուցիկ զաւրութենէն: Իսկ աստուածպաշտութիւն յորժամ խոովիցէ, յայնժամ առաւել լուսաւորեալ բորբոքի:

4· Եաես զհէրոնական զալուստն յատանական փառաւորեալ ի մէնջ իբրեւ զառաջինն եւ ջանացաւ խոովել ի շաչիւն կառացն Թնղականաց առ ի խափանել զարշաւանս յատանակին, որ մեզմագնաց եւ հանդարտակոխն ոտիւք խափանեաց զկառամարտիկս եւ զերիւաս պատերազմողաց: Քանզի զիմէր եթէ յատանակն առ ի պաշարումն կառաց եւ երիւարաց պատրաստեցաւ: Քանզի ոչ եթէ եկն փրկիչն յատանակաւ, զի զակաբութեան ինչ կերպարանս ցուցանիցէ, այլ զի հեզութեամբ խոնարհութեան զամպարտաւանութիւնն չիջուցանիցէ: Եւ քանզի զիմէր թշնամին, եթէ ընդ որ ինչ ելանելոց են իրքն ի մարզարէական բարբառոյն, խանգացեալ քինայր ընդ յատանակին: Եւ զի ուսանիցես եթէ ոչ վասն այլ իրիք նոսաւ չիշամարուկ յովանակին, այլ զի զհպարտութիւն հպարտացելոյն չիջուցէ եւ զհեծամեծար ամպարհաւաճութիւն մեծամտելոցն ի կառս եւ յերիվարս խոնարհեցուցէ:

5· Զոր բարւոք յառաջագոյն երանելի մարգարէն ազդ արար եւ քաջալերէր· «Մի երկնչիր դուստր Սիոնի, ուրախ լեր յոյժ դայ հեծեալ ի յատանակի իշոյ»: Եւ ընդէ՞ր յատանակի իշոյ· այլ զի «սատակեսցէ, ասէ, զկառս յերփեմայ եւ զերիւաս յերուսաղէմէ»: Տեսանե՞ս զի զճաւճաճեմական անպարտ սիզութիւնն մեղմասոյր հեզութեամբն ցածուցանէր, զի զոր աւրինակ չարչարանս զչարչարանն երարձ եւ մահուն զմահն կապեաց եւ փայտատուրը խաչին զհակառակորդին զզաւրան խայտառակեաց: Նոյնպէս եւ յովանական զճիապարծիկ զոռոզութիւն խրոխտացոյն քակեաց:

6· «Ուրա՛խ լեր յոյժ, ասէ մարգարէն, դուստր Սիոնի, ցնծա՛ եւ քարոզեա դուստր Երուսաղէմի», զի պարտ իսկ եւ պատշաճ է աստուածապաշտից ոչ միայն յանձինս ընդունել զաստուածական պարգեւսն, այլ եւ յայլս սփռել զբարերարութեանն քարոզութիւն: «Զի ահաւադիկ թագաւոր քո գայ հեզ եւ խոնարհ եւ հեծեալ ի յանառակի»: Բարիոք հեզն եւ խոնարհ յատաջադիր հաստատեաց, զի յայտ արասցէ, եթէ ոչ չքաւորութեան ինչ կերպարանք էին, այլ հեզութեան եւ խոնարհութեան աւետիք: Զի եթէ ոք առ աղքատութեան ընչից եւ չքաւորութեան երիւարաց, հեծանիցէ յիշամբտութիւ յովանակին, չէ ինչ լաւութիւն եւ ի խոնարհութեան համար, քանզի հարկ անանկութեանն ածէ զնա յայն: Իսկ եթէ ոք կառաւ էտ երիւարաչատ առ հանդարտու*թեան ի մարկի իշոյ նատիցէ, զարդարէ խոնարհութեամբ զկարգ հեզութեանն:

7· Զէ՛ր աղքատ ի կառաց թագաւորն զաւրութեանց· չէ՛ր չքաւոր երիւարաց եւ կառաց Միածինն, զորմէ ասէ մարգարէն, եթէ «կառք Աստուծոյ բեւրապատիկք են եւ հազարք ուղղիչք»: Զէ՛ր աղքատ ի կառաց, որոյ զհողման լծեալ ի կառն արշաւէր սքանչելի եւ նորանշան երասանակաւք· կամ թէ ո՞չ գիտիցես զի որպէս մեզ ճիք են յանդրուարս, նոյնպէս եւ նմա հողմք յերիւարս· ըստ այնմ զոր Դաւիթն ասէ, թէ «որ չերչին ի վերայ թեւոց հողմոյ»: Եւ զոր աւրինակ կառք ի չորից երիւարաց լծին, նոյնպէս եւ Աստուծոյ աչխարհավար, աչխարհպաղարման կառքն ի չորից հողմոց են հաստատեալ, ըստ այնմ զոր Զաքարիայն ասէ, եթէ «տեսանէի ձիս չորս· եւ ասեմ զի՞նչ իցեն սոքա, Տէր· եւ ասէ, սոյս են չորք հողմք երկնից»:

8· Եւ որպէս յաչխարհիս երս եւ ի սպասս եւ ի պէտս թագաւորաց յամենայն կողմանս դեսպանք բազմեալք կարգեալք, զի յորժամ հրեչտակք ուրեք արձակեսցին պատրաստական լինիցէ

---

25 Հոմ. Ա. 13:
32 Բ թնդականաց: Զ կառաց թրթռականաց:
33 Զ. հանդարտագնաց··· պկառամարտիկ զերիվ·: Զ յովանակն:
34 Զ. պարտուճն փոխ, պաշարուճն
35—38 Զ. Քանզի եկն փրկչին յովանակաւ ոչ եթէ զակաբութիւն ինչ ցուցանէր, այլ հեզութիւն թ. զի զամբարտաւանութիւն չիջուցէ:
39 Զ. եթէ որ ինչ լինելոց են [illegible] ժ. ր. նախանձեալ:
40—41 Զ. չունի եւ զյովանակին:
42 Զ. մեծամեծ ամբարտաւանութիւն: Բ ամպահաւաճութիւն:
45 Զ. ք. ասելով:
46 Զաք. Թ. 9: Ճոխ. ԺԲ. 15: Զ. քաղցեա եւ ուրախ լեր··· զի ահա: Բ գահ.
47 Բ չունի ի (յաւ.):
47 Զ. չունի եւ — այլ:
49 Զ զճճճեմական ամպարհաճաւթիւնն մեկիցէր հեզութեամբն եւ ց· զոր:
50 Զ չարչարանօք զչարչարանս:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека АН Арм. ССР
1730-71

51 Զ մահուամբ: Փայտիւ սուրբ խաչին զհակառակամարտին զզօրութիւնն:
53 Զ ուսանիցէ զձիամարտիկ զ· խրոխտացեալսն:
54 Բ ցնծայ:
55 Զաք. Թ. 9: Զ չունի իակ:
56 Զ յանձին ունել:
57 Զ պարգեւս: Բ յայլ: Զ. զբարերարութիւն:
58 Բ գա: Զ նստեալ յաւ.:
59 Զաք. Թ. 9: Զ բարւոք զհեզն զխոնարհն: պատճառաւ փոխ. կերպարանք:
62 Զ ինչից: յովանակի: ի լաւութիւն:
63 Զ համարեալ:
65 Բ կառաւեա··· իշո: Զ առ հեզութեան նստեցի ի մարկի իշոյ:
67 Զ ի կառաց եւ յերիւարաց:
68 Զ մարգարէն ասէ Թէ: Բ բիւրապատիկ:
68 Զ որ զհողմս լծեալ արշաւէ:
69 Սաղմ. կէ. 18:
71 Բ գիտացես: Զ գիտիցես Թէ որպէս:
72 Բ յանդրուարս Զ յերիւարս: հողք համարեալ են:
73 Սաղմ. ՃԳ. 3: Զ չունի 73—95 մարգկան:
77 Բ աեանէլ:
78 Զաք. Զ. 3, 5:

© National Library of Armenia

անխափան եւ անարգել զՀրամանս թագաւորացն կատարիցեն:
Նոյնպէս եւ Աստուած հաստատեաց իսն եւ դեսպան մշանջենաւոր,
անմահ, անեղծ, անզանգատական, անխափան ի թշնամեաց, ան-
85 նահանջ ի հակառակ*որդւոց· եւ արդ արշաւեցուցանէ զոմանս 211ա
ասաի անդր եւ զայլսն անտի այսր:

9· Եւ արդ տես զԱստուածոյ միշտ արշաւանիկ դեսպանն, ոչ
միայն ի ցամաքի արշաւել, այլ եւ ի ծովու, զի նովին միով հողմով
զոմանս յարեւելից յարեւմուտս եւ զայլս յարեւմտից յարեւելս ըն-
90 թացուցեալս· ոչ միայն մեծամեծաց եւ պատուականաց, այլ եւ աղ-
քատաց եւ անանկաց, տարածեալ ի մխիթարութիւն վաճառագիւտ
եւ անարարն չահից, ոչ կառավար, ոչ ուղղիչ, ոչ նահանջիչ· այլ
Աստուծոյ առատ բարերարութեան ակնարկելովքն ընթանայ եւ ըն-
թացուցանէ: Եւ զայս ասելով առ ի չայս առնել, եթէ չէր չքաւոր
95 ի կառաց եւ չերիւարաց· որ զայսպիսի դեսպանն չնորհեաց մարդ-
կան, այլ եկն յովանակաւն մխանգամայն ի քակել ամբարտաւա-
նութեանն, 'հեզութեամբ, զի եւ զաւրինակ մտին հեթանոսաց
նկարեալ աւետարանեացէ:

10· Քանզի չատանակ ընդ պիղծ անսաստնա է համարեալ· զի
100 զամենայն որ ոչ կղճակահերձ իցէ եւ ոչ սրոճիցէ, ընդ պիղծ անա-
տնա է եւ ոչ սրոճայ, ընդ անսուրբ անսաստնա է համարեալ:

11· Ցառաջագոյն նկարէր զկերպարանս մարդախնդիր տես-
չութեանն· քանզի հանդերձեալ էր Աստուած առնել իւր երիւարս
5 զանսրբական ժողովուրդս: Զի որպէս ձիք երիւարք են հեծելոց,
նոյն*պէս եւ հոգիք սրբոց երիւարք Աստուծոյ, առ ի վարժ եւ ի 212ա
հրահանգս խրատականս· ըստ այնմ զոր մարգարէն ասէ, եթէ
«երանիցես չերիւարս քո, եւ հեծելութիւն քո փրկութիւն է»: Այս-
պիսի չինչ երիւար արմուղ աներասանակ էր Պաւղոս, չանապան
10 առաքելական աւրինացն, որ ի ճարակս աւրինացն արածէր· եւ աւետա-
րանական չնորհացն կիցս ընկենոյր: Եւ յորժամ եղ նմա սանձս
Տեառնորդին ամենատեառն ասէր· «Սաւուղ, Սաւուղ, ընդէ՞ր
հալածես զիս, խիստ է քեզ ընդդէմ խթանի ոտքացել»· եւ ընդդէմ
15 սուսերի կիցս ընկենուլ:

84 Բ անդանդաղելիք· կը սպասուէր անդանդաղելիս· ուղիղն է –գական· հմմտ· Սերբերեանս 160 «անդանդաղական բնութիւն»:
95 Զ· արդ եկն յովանակաւ մ· ք· զամբարտաւանութիւն խոնարհութեամբ:
97 նկարեալ] Զ կատարեալ:
100 հմմտ· Ղեւտ· ԺԱ· 26:
102 Բ որոճաս:
103 նկարէր] կատարէր:
104 Զ Աստուած անուանել երիվար աստուածպան սրբական ժողովուրդ:

106 Զ պինդս... են առ ի վարս եւ ի հրամանս:
108 Ամբակ· Գ· 8:
109 Բ չուճի արմուղ — Պաւղոս: Զ:
110 Զ չանսական աստուածային անանձնէն, ա· կցատող աստուածային օրինացն: Զ չուճի եւ (յորժամ)... անձն, նստեալ ի վերայ նոցա սրդին ամենատէրն... զի՞ հալածես...:
114 Գործք ԻԶ· 14:

12· Եւ այսպէս Աստուած առնէ երիւարս զոգիս, որ բաւական
լինիցին ըստ իւրեանց կարողութեան ընդունել զանբաւն, առնուլ
զանձս աստուածպաչտութեան, որ ի զարտուղեաց ամպարչտու-
թեանն զարձուցանիցեն· անձս արդարութեան, որ զանիրաւու-
20 թիւնն հալածիցեն· անձս զգաստութեան, որ զպոռնկութիւնն
յածուցանիցեն, անձս սիրոյ, որ զատելութիւն մերժիցեն· անձս
աննախանձութեան, որ զնախանձն տարաչարչիկ առնիցեն: Զոր
աւրինակ ի սանձս երկու պէսք կարեւորք են եւ պատրաստութիւն
հեծելոյն եւ զարդ եւ զգուչութիւն երիւարին· զի եթէ հանիցես
25 զսանձս ձիոյ, հաներ, մերկացուցեր զամենայն զզարդն եւ զվա-
յելչութիւն:

13· Այսպէս եւ աստուածպաչտութեան սանձք ոչ միայն առ ի 213ա
զգուչութիւն ոգւոցն են· այլ եւ ի զարդ եւ ի վայելչութիւն: Քան-
զի զի՞նչ լինչ վայելուչ եւ պայծառազարդ իցէ քան զմարմին նահան-
30 ջել ցածութեան սանձաւք, եւ զբերան զգուշացեալ արդարութեան
երախճանաւքն առ ի չբարբառել զաղծապիղծ, զարչկանն
խաւսս: Զի յորժամ ոք զԱստուածոյ երկիւղն իրրեւ սանձս ունիցի ի
բերան, առ ի չածել զչեզուամբ զպղտեղութեան,
րան, որ ապագով եւ խորչանքն են առ ի յԱստուածոյ: Երիւար է
35 պատուական, վարժ եւ զարդարուն, զգուչացեալ եւ պատրաստա-
կան ի պէտս աչբունական· բաւական առ ի յասել, թէ որպէս զի
կան ի պէտս աչբունական· բաւական առ ի յասել, թէ որպէս զի
«մի խաւսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան»:

14· Լեր երիւար նորամուղ Քրիստոսի, առնուլ ի նուս ոչ
զձանր, այլ զթեթեւն եւ փոքրոգի: Զհեծեալն որ թեթեւացուիչն
է ձանրութեանց, այլ երիւարք յորժամ չառնուցուն ի նուս, են
40 թեթեւք, եւ յորժամ առնուցուն ծանրանան: Իսկ մեք թեթեւք
մինչ չեւ առեալ զՔրիստոս յոգիս, ամենայն մեզաւք եմք ծանրա-
եալք· եւ յորժամ առնուցումք՝ թեթեւանամք եւ թռչիմք: Որպէս
եւ ինքն իսկ ասաց, եթէ «առէք ի ձեզ զլուծ իմ· եւ ուսարուք չինէն
զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ· եւ լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ
45 զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ· եւ լուծ իմ քաղցր է եւ բեռն իմ
փոքրոգի»: Եւ զանգի եւ փախեաւ ի կարգէ ճառիս յատանկն, այլ 214ա
ազաչեաց*ուք զՏէր յովանակին, որ կարողն է ունել եւ ածել հա-
րատեւ ընդ ճառս զյատանկն. զանգի ինքն է, զորմէ ասէ մարգա-
րէութիւնն, եթէ «կապեսցէ զորթոյ զյատանկն իւր»:

50 15· Նառաւ յովանակի, «որ նաւին ի քրօքս», որ ի վերն ասա-
զի՞ն է վասն աստուածական բնութեանն, եւ ի խոնարհ առնչեանց
զին է վասն մարգասէր չնորհացն: Որում ի բարձունս դոզութեամբ եր-
վասն մարգասէր չնորհացն: Որում ի բարձունս դոզութեամբ եր-

116—146 (փոքրոգի) չուճի Զ:
138 Սաղմ· ԺԶ· 4:
146 Մատթ· ԺԱ· 29—30:
148 Բ հարբառել: Զ հաստատել:
149 Բ զորթս: Ծնն· ԽԹ· 11:
150 Զ նառաւ Ցս ի յատանակի: Գ· Թագ· ԺԹ· 15· Սաղմ· ՂԲ· 1: Ես· Լի· 16: Ցովհ· ԺԲ· 15:
151 Զ առնչեցեալ:

© National Library of Armenia

կիր պագանեն հոգեղենք, եւ յերկրի համարձակութեամբ քարոզի մարմնաւորաց· զի որչափ ի վերն ահագին է անքնին ծնունդ, նոյնչափ եւ ի խոնարհ փափագանաց ինքնարձակեցիկ չառաւեղն: «Նստաւ ի յովանակի եւ տարածէին ժողովուրդքն զհանդերձս առաջի»: Բարո՛ք էր պատիւն, այլ ոչ այնպիսի ինչ արժանի ըստ պատուականին, կարողութեան պատուչացն: Ընդունելի էր պատիւն, քան զի ոչ ըստ իւրում արժանաւորութեան ինդրէ Աստուած պատիւ ի մարդկանէ, այլ ըստ բաւականի պատուաբարացն:

16· Նա եւ չիք իսկ այնպիսի ինչ, որ զԱստուած ըստ իւրում արժանաւորութեանն կարող իցէ պատուել· ոչ երկիր ամենայն եւ ոչ բնաւ երկինք ի բարբառս ձուղեալս եւ ոչ ամենայն արարածք հրեշտակաց եւ հրեշտակապետաց եւ երեւելեաց եւ աներեւութից լիալ լեզուք, են բաւական զԱստուած ըստ իւրում արժանաւորութեանն փառաւորել: *Այլ յարատեւին մարտն որք յաղթենն պսակին, եւ որք չյաղթենն ամաչեն: Իսկ յաստուածպաշտութեան ճգունս, որք յաղթենն նորոգին եւ որ չյաղթենն ամաչեն. եւ որք զպարտութիւնն խոստովանին պսակին, առնուն պսակս, ոչ զյաղթութեան, այլ զմաերմական հնազանդութեան լրատացիկ բարուց· զի լմաննան խորհել եւ տալ զյաղթութիւն մահկանացուքն անմահ բնութեանն, ոչ լռութեամբ պապանձեալք, այլ ըստ իւրեանց կարողութեանն մեկնելով:

17· Քանզի չէ պարտ բերանաւք Աստուծոյ ահաւորութեանն ամենայն ուրեք լռել, եւ ոչ ի պատճառս քարոզութեանն ամենայն ուրեք յանդգնութիւն բարբառել, այլ սանձաւք նահանջել: Մի զարժանաւորն լռել, եւ մի զանհասականսն բարբառել· այլ եւ լռութեանն եւ խաւսից չափ յայտ առնել: Քանզի են եւ աստուածպաշտութեանն պատճառք, որ ի կորուստ տանին. զոր եւ հեթանոսք կռապարիշտք պատճառաւք ի կերպարանս աստուածպաշտութեանն զչաստուածպաշտութիւնն ի մէջ բերէին: Քանզի մահկանացու բնութիւն, ասեն, չհանդուրժէ անմահականին եւ չկարեմք մերձենալ առ Աստուածն ամենեցուն արարիչ:

18· Մերձեսցուք հրեշտակաւք առ Աստուած եւ ըստ մերում կարողութեան պատուեսցուք զորս կարեմք պատուել: Զի զԱստուած չիշխեմք պատուել, քանզի անցանկ եւ ըստ լեզու եւ ըստ միտս * եւ ըստ ամենայն մարդկան խորհուրդս: Եւ արդ քանզի 216ա

154 Զ ի մարմնականացս· զի որչափ ի վեր է ահագին: Բ անքննին:
156 Զ Նստաւ Ցիսաւս... զհանդերձսն: Ցովհ· ԺԲ· 15:
157 Զ չունի այնպիսի:
158—160 Զ պատուիրանին պատուչացն պատիւ քանզի... արժանաւորութեանն... պարգեւս (փոխ· պատիւ) ...պատուողացն:
162 Զ պատուել կարացէ:
163 Բ ձուղեալս զ Բշտիկով: Զ· ձուղեալ եւ ամենայն բարբառք:
164 Զ հրեշտակապետաց· երեւելեաց... լեալ... բաւական են. չիք զԱստուած:
165 Բ փառաւորեալ Զ փառաւորել զնա:
166 Զ չունի 166—214:
182 Բ չհանդուրժէ:
186 Բ պատուել:

զայսպիսի գչար խորհուրդս եւս Առաքեալ զատանայի, զի ի պատճառս աստուածպաշտութեան զհեռանայն առ յԱստուածոյ սերմանէ· եւ բարբառաւք աւելի ինն պատուոյ ուրացութիւն յԱստուածոյ կազմէ, զրէ Կողոսացւոց, թէ «Մի՛ ոք զձեզ կապուտ կողոպուտ առնիցէ ճարտարութեամբ անտի մոլորութեանն»: Տե՛ս զի՞ըդ առնիցէ ճարտարութեամբ անտի մոլորութեանն»: Տե՛ս զի՞ըդ կռապաշտք են· պատճառանաւք աստուածպաշտութեան ուրացութիւն յԱստուածոյ խարդախէր:

19· «Մի ոք, ասէ, զձեզ կապուտ կողոպուտ առնիցէ» ըստ վարդապետութեան մարդկան, ըստ կարծական աչխարհին չհասպետաց· եւ ոչ ըստ Քրիստոսի· «յաւրէնս հրեշտակաց, զոր ոչ եհես զրահեա վարիցէ, տարապարտ հպարտացեալ յիւրոց անտի մտացն· եւ ոչ ունիցի զգլխոյն, ուստի ամենայն մարմին յաւգիւք եւ խաղաղեաւք աճէ զաճումն Քրիստոսի»: Զի զԱստուած թողուլ եւ պատճառանաւք աստուածպաշտութեան առ հրեշտակս ընթանալ, այն ոչ աստուածպաշտութեան գաւանութիւն է, այլ ամպարչութեան պատրաստութիւն:

20· Եւ արդ եւ լռել զԱստուածոյ փառաւորութիւնն ամպարչութիւն է եւ յանդգնել առ փառն եւ չճանաչել զիւրաքանչիւր եւ չառնուլ ի միտ զամենայնի՛ւ անցական զաւրութիւնն, զաւրաւոր է նորին ամպարչութեանն: Եւ զի մի յերկոցունց կողմանց անկանիցի, նիցիմք ի մեզս, զմիջավայրն ունել, մի՛ զիարս անգնդոցն քննել, եւ մի ի պատճառս խորոցն փախչելոյ, ի ծանծաղական չհիցիմք հրաժարել· եւ փառաւորեսցուք զՔրիստոս, ոչ որչափ պարտիմք, այլ որչափ կարող իցեմք· ոչ որչափ պարտիմք, զի այն անհնարին է, այլ որչափ կարող իցեմք: Քանզի այն գիւրահատոյց է եւ ընդունելի: Զի որ զմիտան քննէ ընդ յաւժարութիւն գթոյն հաճի եւ ոչ նեղի: Զի որ զմիտան քննէ ընդ յաւժարութիւն գթոյն հաճի եւ ոչ բանից եւ խաւսից բազմութեամբ առնէ ընդունելի:

21· Հեծաւ յաւանակի, որ յերկնաւոր կառս նստի մշանջենաւորական: Տարածանէին մարդիկ զհանդերձս առաջի, որոց աւրէն էր նախ քան զհանդերձան զոգիան տարածանել: Ով որ տարածանէս զհանդերձս ի կոխան յաւանակին, տարածեա զհոգիսդ Աստուծոյ ի բնակութիւն· զոր եւ Մկրտիչ Յովհան քարոզէը, եթէ «պատրաստ արարէք զճանապարհս Տեառն եւ ուղիղ արարէք զաւրէս նմա»: Ոչ եթէ ճանապարհս ինչ եւ չաւիղս հորդել, այլ զհոգիս նմա»: Ոչ եթէ ճանապարհս ինչ եւ չաւիղս հորդել, այլ զհոգիս առնել պատրաստական, յորս մտեալ բնակեսցէ Աստուածն տեառ

հրեշտակքն ահիւ փառաւորէին ի բարձունս, աւրհնէին ցնծալով
եւ մանկտին յերկրի ասելով. «ովսաննա որդւոյ Դաւթի»:

22. Ովսաննան այս է ըստ Եբրայեցւոց բարբառոյն փառաւո-
րութիւն * լիմն նշանակել. ա՛չ որպէս ոմանք կարծեցին, եթէ բան 218 ա
լինչ կէս իցէ. այլ լիմն ովսն եւ այլ լիմն աննայն. այլ իւր
առանձինն մեկնութիւն է բանիս եւ ոչ է ովս եւ աւ, նա որպէս ոք
ի ասիցէ, եթէ փառ իմն եւ մարդ, այլ մխաաց բանն ովսա նա
մեծութիւն Թարգմանի, որպէս ի մեր լեզուս մեծութիւն ի բար-
ձունս. յերբայեցւոց բարբառոյն ասի «ովսաննայ ի բարձունս.
«աւրհնեալ է այն որ գալոցն է յանուն Տեառն»:

23. Տես, զիարդ մանկտին աւրհնէին եւ վարիսեցիքն ըմբռ-
նէին առ իւրեանց չարութեանց: Իւրեանց կամաւք հրաժարէին
յաւրհնութենէն. եւ յաստուածական զաւրութենէն անհրաժեշտ,
ընդունէին զիւրեանց չարութեանցն յանդիմանութիւն: Քանզի որք
զաւրէնն ընթեռնուին եւ ընդ մարգարէսն անցանէին, եւ ընդ հին
կարգսն հայէին եւ զալառեան կենարարին ակն ունէին, յորժամ
տեսին զլոյսն ծագեալ՝ ժխտեցին, ժխեցին զյայտնութիւնն: Ա-
ռաւած իրրեւ տես զլպրչութիւն կառաբեալ հասակացն ուսելոց
զաւրէնն, երաց զբերան զեղիս, խակ եւ անկատար հասակացն, զի
որք մտաւքն եւ կամաւք կարող էին հասուցանել զաւրհնութիւնս
բանին եւ զրկեցին, արար զի որք չէիցեն ի տես կառաբեալ կամացն
հասեալ փառաւորեսցին ընդ նոցա զբանն Աստուած: Անդ կատա- 219 ա
րեալ կամքն զրկեցին եւ ասա հասիկ* կամաց պարզեւեսցին Աս-
տուծոյ չնորհքն:

24. Եւ մինչ դեռ աւրհնէին մանկտին զՅիսուս եւ ասէին «ով-
սաննայ որդւոյ Դաւթի». հաչէր, մաչէր նախանձ զլսաւորն զԺո-
մակ. «Ո՞չ, ասեն, լսես զինչ ասեն որք զքէն»: Ասէր վերկիչն
Տեառնորդի. «Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր, եթէ ի բերանոյ մանկանց
ողջոյց առնդիեցաց կառաբեցիդ զաւրհնութիւնս»: «Ամէն ասեմ
ձեզ, զի եթէ եւ որք լսեսցեն, սակայն քարինքզ ազազակեսցեն»:
Այլ զի մի ոք ի Հրէից իցէ ասա եւ լսիցէ, ասիցէ եթէ որ ինչ չէր
անկ նմա վկայութիւն, զայն յաւրհնեալսն յանձն Յիսուս. զի որ
ինչ յԱստուծոյ առացեալ էր յինքն ձգեաց: Հարկ է ցուցանել, զի
ի նա կառաբի Սաղմոսն. «Տէր, տէր մեր, զի՛ աքանչելի է անուն քո
ի վերայ ամենայն երկրի»: Իրրեւ խորոց իմն ի միջի եղեալ ցու-
ցանէ ընդ Հին եւ ընդ Նոր Կտակարանս: Եւ քանզի Հին Կտակա-
րանքն եւ առաջին պաշտաւն ի միում անկեան եւ ի միում խորչի

224 Զ հրեշտակք փառաւորէն յերկինս
ահիւ աւրհնէին եւ մանկտին ցնծալով...:
225 Զ չունի որդւոյ Դաւթի:
Բ ովսաննա ապա երկրորդ ն ջնջուած:
226 Զ կ'առաքի. ովսաննա... փառաբա-
նութիւն իսկ նշանակեալ եւ մեծ գովու-
թիւն: 231 Բ չունի է (բ·):
249 Ծովհ. ԺԲ. 14:
250 Մատթ. ԻԱ. 15, 16: Սաղմ. Ը. 3:
253 Ղուկ. ԺՔ. 40: Բ լսեցեն:
258 Սաղմ. Ը. 2:

կատարէը, ասէ, «յայտնի է ի Հրէաստանի Աստուած եւ յիսրայէլի
մեծ է անուն նորա». եւ ոչ ի Հեթանոսս. քանզի չեւ եւս էր ծանու-
ցեալ եւ ոչ քարոզեալ ի Հեթանոսս:

25. Յորժամ մերձ էր աւետարանական քարոզութիւնն ամե-
նայն աշխարհի յայտնել, իմացեալ Հոգւովն ասէր յառաջագոյն
Դաւիթ, թէ «Տէր, տէր մեր, զի սքանչելի է անուն քո յամենայն եր-
կրի. ամբարձաւ մեծվայելչութիւն քո ի * վերոյ քան զերկինս». 220 ա
այս ինքն զվերանալն ի յերկինս զուշակէր: Եւ ուստե՞ այս. լո՛ւր
այս ինքն զվերանալն ի յերկինս զուշակէր: Եւ ուստե՞ այս. լո՛ւր
ճառագրին. ասէ. «Մինչ դեռ պչուցեալ հայէին, վերացաւ. եւ
ամպն կալաւ զնա յերեսաց աչաց նոցա»:

26. «Ի բերանոց մանկանց ողջոյց առնդիեցաց կառաբեցիդ
զաւրհնութիւն». զի առ նախանձու, ասէ, կառաբեալք հասակաւ
փարիսեցիքն եւ աւրէնսգիրք թաքուցին զքո փառն, ելոյծ ի
բերանոց ողջոյցն յանդիմանութիւն ըմբռնանիչ քոց թշնամեաց:
«Վասն թշնամեաց քոց եղիցի թշնամին եւ վրէժխնդիր». եւ իցէ՞
ոք ուրեք թշնամի եւ նոյն վրէժխնդիր. զի էին թշնամիք աստուած-
պաշտութեան եւ վրէժխնդիրք աւրինաց, աւրինացն ոսոխք՝ եղ-
բարքն Յեզաբելայ: Զի զոր աւրինակ Յեզաբէլ ընդ Աստուծոյ
կռուէր եւ զնաւրէնել կամէր. եւ զպատահէր, եթէ հայհոյէ
պատուոյն: «Զի՞նչ է, ասէ, մարդ զի յիշեցես զնա. կամ որդի 221 ա
մարդոյ, զի այց * առնիցես զնմանէ»: Յորժամ ասաց զյառաջ քան
զյաւերտեանս զաւրա զպատիւն, ապա յարէ զնոյն եւ զնորին անտե-
սութիւնն:

28. Ագարիչն երկնից եւ երկրի արար այց որդւոց մարդկան,
քանզի եաես յախտ անհնարին հիւանդութեանց ծիւրեալ զազգս
մարդկան, իրրեւ զբարերար եւ զմարդասէր բժիշկ յիշեաց եւ արար
այց ողւոց եւ մարմնոց. որ ասացն եթէ «ոչ ինչ է պիտոյ բժիշկ
ողջոց, այլ հիւանդաց», եւ «ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղա-
տուս յապաշխարութիւն», «փոքր մի խոնարհ արարեր զնա քան

262 Սաղմ. ՀԵ. 2:
265 Բ ամենի: Հոգովն:
267 Սաղմ. Ը. 2:
270 Գործ. Ա. 10:
272 Սաղմ. Ը. 2:
275 Սաղմ. Ը. 3:
277 Բ աւտոխք:
284 Սաղմ. Ը. 3:
285 Սաղմ. Ը. 4:
288 Բ պատուոյն:
289 Սաղմ. Ը. 5:
296 Մարկ. Բ. 17:
297 Մատթ. Թ. 13:

© National Library of Armenia

զհրեշտակս»: Վասն չարչարանացդ ըստ մարմնոյն, զոր զգեցաւ Միածին բանն Աստուած, զորմէ եւ Պաւղոս ասէ յերբայեցւոց թղթին, եթէ «փոքր մի խոնարհադոյն լինել քան զհրեշտակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանացդ մահու». Յիսուս Աստուածդ որ նոյն եւ մարդ կրեցդ լերամ մարմնովն զչարչարանս:

29· Եմուտ յերուսաղէմ փառաւորեալ ի մանկտոյն: Որ պահէն անարատ զմանկունս յորովայնս եւ չարժեացդ, ուղղեցդ զլեզուան չեւահասս յաւրհնութիւն, զղրղեցդ զաղայան ի փառաւորութիւն աւ ի յանդիմանութիւն ծերոցն աւրէնագիտացդ, որ զաւրէնսն ընթեռնուին եւ զաւրինադիրն ուրանային· որք զմարգարէութիւնսն քննէին եւ զոր մարգարէքն խաւսէին, չճանաչէին: Ելեալ հասակք տհաս անմեղացն յանդիմանէին զկատարելոցն անճնիչխանութեամբ, իշխանութեամբ զիարդալութիւնս: 222 ա

30· Եմուտ փառաւորեալ յանմեղացդ՝ անմեղն: Նա եւ վայել էր իսկ անմեղականն Աստուածդ, զի յանմեղացդ փառաւորեսցի: Եւ ոչ եթէ միայն անմեղացն սիք իցեն պատճառ ի փառաւորութիւնս, այլ թէ եւ մեք կամիցիմք զանմեղութիւն ազգացդն յանձին ունել, չառնիմք խոտան եւ ընկեցիկ յԱստուածդ փառաւորութեանցդն. ըստ այնմ զոր Փրկիչն ասէր· «եթէ ոչ դարձջիք եւ լիջիք իբրեւ զմանկունս, ոչ մտանիջիք յարքայութիւնն երկնից»: Եւ արդ ամենեքին լեալ անմեղք, փառաւորիցեմք զանմեղն, զի անմեղն մի միայն է Յիսուս, զորմէ առաքեալ ասէր, թէ «այնպիսի վայել էր մեզ քահանայապետ, անմեղ, սուրբ եւ անարատ, զատեալ եւ մեկնեալ ի մեղաց»:

31· Ինքն Տէրն, Աստուած եւ քահանայապետ եւ թագաւոր եկեալ մտանէ ի քաղաքն յերուսաղէմ, ըստ այնմ, զոր մարգարէն ասէր, եթէ «ահաւադիկ թագաւոր քո գայ»: Այլ յորժամ լսեցեալ, թէ երուսաղէմի թագաւոր է Քրիստոս, մի հատանել ընդ մէջ զթագաւորութիւնն, քանզի մի թագաւորութիւն է երկրորդութեանն. եւ յորժամ ասիցեն զՀայր թագաւոր, առ նմին իմանիջիր եւ զՈրդի թագաւոր· քանզի Հարր ծանեալ զՈրդի եւ Որդւով զՀայր եւ սուրբ Հոգւովն զՀայր եւ զՈրդի: Մարգարէքն զՔրիստոս քարոզեն թագաւոր երուսաղէմի, «Ուրախ լեր, ասէ, *դուստր 223 ա Սիոնի, ահաւադիկ թագաւոր քո գայ»:

32· Իսկ կենարարն զիւր պատիւն Հաւրն գնէ· ասէ, «Մի երդնուք յերուսաղէմ, զի քաղաք է մեծի արքային». եւ ոչ ասաց վայրապար թէ քաղաք է Հաւր, այլ ասէ· «Քաղաք է մեծի արքային»: Եւ այսու զպատիւն քարոզեաց եւ ոչ զմի էութիւն զիւր եւ

298 Սաղմ· ՟Ը· 6:
300 Եբր· Բ· 7, 9:
304 Համմ· Դատ· Ա· 44:
305 Բ զգեցեալ:
314 Բ աղագս:
316 Մատթ· ԻԸ· 3:
320 Եբր· Է· 26:
323 Բ· գա· Զաք· Թ· 9:
330 Զաք· Թ· 9: Բ գա:
333 Մատթ· Ե· 35:

զՀաւր բաժանեաց: Քանզի թագաւոր է եւ միածին Որդի թագաւորի, ոչ մահկանացու ունի զթագաւորութիւնն, ոչ մուրացածոյ եւ պիտակական, այլ մշտնջենաւոր ի մշտնջենաւորէն, ըստ անյայր եւ անչափ յաւիտեանն անցեալ· «Արքայութիւն քո, ասէ, արքայութիւն յաւիտենից եւ տէրութիւն քո ամենայն ազգաց յազգս»:

33· Զսոյն վկայեն գիրք եւ զՀաւրէ, զսոյն եւ զՈրդւոյ· քանզի մի թագաւորութիւն է Հաւր եւ Որդւոյ: Այլ աւ այժմ հանգուիք աւ Հայր եւ ապա գալոյդ եւ զՈրդւոյ թագաւորութիւն, որ երկու են երեսաւք եւ մի զաւրութեամբ եւ էութեամբ· եւ մի՛ զմի մարգարէսքն Հաւր համարեալ եւ զմիւսն Որդւոյ, այլ զոր Հաւրն, զնոյն եւ Որդւոյ լսանալ: Այլ աւ այժմ ասացից ի ղէմս Հաւր· «Արքայութիւն (զո արքայութիւն) յաւիտենից· եւ տէրութիւն զո ազգաց եւ յազգս»: 224 ա

34· Ասացի եւ աւ ի Դանիէլէ զՈրդւոյ, եթէ «Տեսանէի եւ ահաւասիկ [գայր] ընդ ամպս երկնից իբրեւ զՈրդի մարդոյ· [Եւ նմա տուան փառք եւ պատիւ եւ արքայութիւն: Արքայութիւնն*բա արքայութիւն յաւիտենից եւ տէրութիւն նորա ազգաց եւ յազգս·] եւ գայր հասանէր մինչեւ ի հինաւուրցն· եւ նմա տուան փառք եւ պատիւ եւ արքայութիւն»: Այլ գտուանն ըստ մարմնաւոր տեսչութեանն է լսանալ· եւ զուանէլն ըստ աստուածական պատուոյն, զի զոր ունէրն ըստ աստուածական պատուոյն, զնոյն առնու ըստ մարմնաւոր տնտեսութեանն· որպէս ինքն իսկ ասաց, թէ «Հայր, տուր ինձ զփառսն, զոր ունէի աւ քեզ յառաջ քան զլինել աշխարհի»: Զառաջինն ունէրեւ զնորս առնու ի մարմնաւորութեանն պատճառս: Զառաջինն ունէրեւ զնորս առնուի մարմնաւորութեանն պատճառս:

35· «Ինդրեա, ասէ, յինէն եւ տաց քեզ զՀեթանոսս ի ժառանգութիւն քեզ»: Ես, ասէ, կացի Թագաւոր ի նմանէ յառաջ քան զերեւել մարմնաւորութեան տեսչութեանն: Ոչ երբեք ասաց թէ խնդրեա յինէն· զի, զոր ինչ ունի՛ ոք, ոչ եւս խնդրէ· որ ունիցի ինքն է տէր· ոչ երբեք առնու նոցա իշխանութիւն· ոչ եթէ յորմէ հեաէ եկն յաշխարհ, յայնմ ժամանակէ ա՛ն զիշխանութիւն աշխարհի, այլ ի բնէ է տէր եւ իշխան եւ արարիչ աշխարհ: Եւ վկայէ աւետարանիչն Յովհաննէս, եթէ «յաշխարհի էր եւ աշխարհ նովաւ եղեւ եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրս անդր եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան»:

36· Այլ ունէր զամենայն ըստ աստուածական պատուոյն· եւ առնու ըստ մարմնաւորութեան տեսչութեանն: Եւ եթէ* խնդրէլն աւ ի Հաւրէ ի թշնամա՛նս ինչ իցէ Միածնին: Եթէ լսիցես ի Գրոց, եւ զաւր խնդրեալ ի մարդկանէ, ի թշնամա՛նս Աստուածդ համարիս զայս պնդրեալն: Քանզի կամիս այլայլութիւն իմն եւ նուա- 225 ա

338 Սաղմ· ՃԽԴ· 13:
343 Բ յուսալ:
348 Սաղմ· ՃԽԴ· 13:
350 [ ] գրչի կրկնութիւնքեր:
352 Դանիէլ Է, 13—14:
358 Ցովհ· ԺԷ· 5:
360 Սաղմ· Բ· 8:
369 Ցովհ· Ա· 10—11:

© National Library of Armenia

զութիւն կարկատել զմխածնէն, առ ի Հաւրէ խնդրելոյն, յորժամ եւ լսիցես, եթէ եւ Հայր խնդրէ ի մարդկանէ, նուազութիւն եւ փոքրկութի՞ւն կարծիցես զՀաւրէ· եւ եթէ զիարդ խնդրէ, լուր ասէ ի Հին կտակարանս գիսրայէղ, թէ «Զի՞նչ խնդրէ ի քէն Տէր Աստուած քո, այլ երկնչել ի Տեառնէ, եւ գործել զարդարութիւն»: եթէ խնդրելն թշնամանս ինչ առնիցէ Մխածնին, ապա եւ խնդրելն Հաւր սաստ ի մարդկանէ, թշնամանա՞ց ինչ պատճառք իցեն. այլ ունի բան աստուածական պատուոյն. եւ խնդրէ վասն անտեսական տնօրինութեանն:

37. Զոր աւրինակ եւ մարգարէն ասէր ցԱստուած զայնմանէ, զոր ինչ ունէրն եւ որում տիրէր· զի առցէ միւսանգամ ստանալոց, թէ «Տէր Աստուած մեր, սատկիր զմեզ»· իրրու ոչ եթէ աւտարոտիր ինչ էին առ ի նմանէ· զի ամենայն ինչ նորա է· ըստ այնմ, թէ ամենեքեան ծառայք քո են: Նոյնպէս եւ Քրիստոս ամենեցուն ասէր տիրէ բնաւ եւ ունի զամենայն· եւ խնդրէ վասն անտեսական տնօրինութեանն: Եւ եթէ ամենեքին ծառայք նորա իցեն, ընդէ՞ր ասիցես եթէ «սատկիր զմեզ»: Այլ քանզի ար*արեր զմեզ եւ ոչ ծանեաք զքեզ· սատկի՛ր զմեզ միւսանգամ այցելական մարզսաիրութեամբդ: Եւ զի աւրինակ ինչ նման իրացն ի մէջ բերիցեմք:

38. Զոր աւրինակ, թէ ուրուք ագարակ ինչ իցէ, եւ յագարացեալ եւս ի պատուղ կայցէ, եւ այլն եւս վարուն եւ պղտարեր. եւ կորդն եւ արաւսացեալ թէպէտեւ մեր իցէ, չէ մեր, վասն զի չեւ եւս է անկեալ ի գործ, ոչ եկեալ ի պղտարերութիւն. եւ յորժամ ի գործ արկանիցեմք, լինի պղտարեր մերն եւ չմեր, իրրեւ գնոր ինչ ստացուածս: Սոյնպէս եւ Աստուծոյ ամենայն երկիր էր բնա արարչութեանն, եւ աւտարոտիք առ ի նմանէ, վասն անճնիչխանական ապստամբութեանն. եւ քանզի անպտղարեր երկիր մեծն մչակապետ ճչմարտութեանն առաքէր հարկիս եւ թարուքս ի գործ, զի զսկզն կառուսցեն եւ զքարինան հորդեսցեն եւ զանպտուղ անդան կակղեսցեն եւ զարճուսցեն ի պղտարերութիւն:

39. Եւ զայս ոչ վայրապար ինչ կամ յախուռն, այլ իրրեւ զուսկանս եղինս ինչ հարկեաց երկուս երկուս լծէր եւ ի մէջ նոցա հաստատէր իրրեւ զարաւրացական խաչին քարոզութիւն: Եւ այսպէս արձակեալ ընդ ամենայն աշխարհ, կակղէին արկանէին ի գործ առ ի ընդունել զյօրենական, սրբական սերմին ճչմարտու*- 227 ա
թեան բանին: Այլ մի ճանճրասցուք առ ի յաճախել, ճառել եւ զաստուածական բնաւթեանն Որդւոյ եւ զմարդահայեցական տնօրինութենէն: «Ես եմ, ասէ, որ արարի զերկինս եւ զերկիր»:

379 Բ· Օրէնք, ժ· 10:
385 Բ պապէս սատանայ:
386 Ես· Խ Զ· 13:
401 Բ անճնիչխանական:
404 Ովս, ժգ· 4:

40. Եսայի մարգարէ· «Եւ զայս ոչ եթէ ի սկզբանէ ի ծածուկ ինչ խաւսեցայ, եւ ոչ ի տեղի ուրեք խաւարին, այլ յորժամ լինէրն անդ էի: Եւ արդ Տէր առաքեաց զիս եւ Հոգին նորա»: Զքեզ, Տէրդ եւ առաքիչ երկնից եւ երկրի, առաքէր Տէր եւ Հոգին նորա: Այո, ասէ, քանզի ա՛յնպէս կամեցայ: Եւ եթէ այս այսպէս իցէ, ապա ուրեմն Հոգին յառաջակարգ քան զՈրդին իցէ, զոր քաւ եւ մի լիցի ասել· Հանգիստապատիւ զուգական ի միասին էական Որդւոյ եւ Հաւր ասել· այլ յառաջապատիւ յառաջակարգ քան զՈրդի չճառել:

41. Եւ արդ առաքեցաւ Մխածինն ըստ մարմնաւորական յայտնութեանն· եւ ոչ իրրեւ ի տեղեաց ի տեղիս փոխելով ըստ աստուածական բնութեանն· քանզի ոչ եթէ Աստուած ուրեք իցէ եւ ուրեք չիցէ: Զի որ առաքէ ոք զոք, յայն վայր առաքէ, ուր ինքն չիցէ· եւ որ առաքին յայն վայր երթայ, ուր ինքն չիցէ: Եւ արդ ցոյց տեղի զերկրի կամ զերկնից թափուր ի Հաւրէ եւ յՈրդւոյ եւ ի Հոգւոյ սրբոյ, եւ ապա զառաքեցաւն նենգաւորէր: Եւ առաքեաց 228 ա
Հայր եւ առաքեցաւ Որդի, այսինքն* յայտնեաց Հայր, գուշակեաց Հայր եւ առաքեցաւ Որդի: Եւ այսպէս յայս միտս իմանամք զառաքեալն Հաւրն եւ Սուրբ Հոգւոյն զՈրդի ըստ մարմնաւոր յայտնութեանն, որում եղեն վկայք:

42. Այլ զի յամենայն տեղիս եւ ամենայն ուրեք միանգամայն է ի միասին էական երրորդութիւնն, վկայեցեն Գիրք զՀաւրէ, թէ «զերկինս եւ զերկիր ես ո՞չ լնում, ասէ Տէր»· եւ զՈրդւոյ թէ «որ էջն նոյն է եւ որ երն ի վերոյ քան զերկինս, զի լցցէ զամենայն», եւ զՀոգւոյն սրբոյ, թէ «յո՞ երթայց յՈրդւոյ քումէ կամ յերեսաց քոց զՀոգւոյն սրբոյ, թէ «յո՞ երթայց յՈրդւոյ քումէ կամ յերեսաց քոց փախեայց»: Եւ այսպէս եթէ «Հոգի Տեառն ելից զտիեզերս»· որ յամենայնի է եւ ամենայն ուրեք մատս, բնաւ երրորդութիւն յո՛ առաքիցէ եւ կամ յո՛ առաքիցի:

43. Եւ արդ ընդէ՞ր ծառայիցես բանիւ եւ սպանանիցես զոչիս: Եւ այլք այլազգ կռուին մարտ եղեալ առ փառն Քրիստոսի· զրեալ է, ասեն, թէ «Հոգի է որ կենդանի առնէ, մարմին ինչ ոչ ուզնէ»: Զի եթէ մարմին մարդոյ իցէ մարմինն Քրիստոսի, ըստ նոցա մոլորութեանն, եւ ոչ մարմին Աստուծոյ, զոր յառաջ ոչ ունէը եւ յետոյ ա՛ռ ի կուսէն, ապա եւ չէ ինչ աւգուտ: Իսկ եթէ Աստուծոյ մարմին է, որպէս ինքն կենարար է ի մարմինն, եւ մարմին կենարարին կենարար: Անաւգուտ է մարմինն ակրունան կան Փոտիանոսաց որ մարմնաւորութեամբ եւեթ հային ի Քրիստոս եւ ոչ զաստուածութիւնն տեսանեն. եւ Պաւղիանոսաց, * որ 229 ա

415 Բ յեսայի:
417 Ես· ԽԸ· 16—17:
419 Բ կամեցա:
420 Բ յառաջակարգք:
437 Բ չուիի ոչ: երեմ· իգ· 24:
438 եփես· գ· 10:
490 Սաղմ· ճԼԸ· 7: Բ փախչ: էլից:
440 իմաստ· Ա· 7:
446 Յովհ· Զ· 64:

© National Library of Armenia

զնոյն քոս եւ զմարմառ ունէին յոգիս· եւ Հրէիցն, որ զԱստուածն ոչ ծանեան եւ զզալոստա Որդւոյն Աստուծոյ ըստ մարմնաւորու-
թեանն չառին ի միտ:

44· Այլ մեզ չահաւոր եւ ազգակար եւ կենարար է մարմինն տերունական հանդերձ աստուածական զաւրութեամբն, որ անքակն եւ անփակ եւ անբաժին յաստուածութենէ անաի իբրեւ զնոբին մարմինն, զոր իմանալ եւ խորհել պարտ եւ պատշաճ է: Եւ մի ծառայել բանիւ եւ ասել, թէ ինքն իսկ աստց, թէ «Հայր, որ առաքեաց զիս, մեծ է քան զիս»· եւ զ«առաքեալ»ն մի՛ ի ծառայական արբանեկութեանն ինչ առնուլ, այլ ի անտեսական յայտնութիւնն: Եւ եթէ զայս այսպէս չհամարիցես, ապա հարկ լինիցի ասել, թէ որ առաքեցաւն որոշեցաւ յառաքչէն: Եւ եթէ հեռացաւ, զիա՞րդ ասէր, թէ «Հայր, որ առաքեաց զիս, ընդ իս է»· եւ եթէ ընդ քեզ էցէ, զիա՞րդ առաքեաց զքեզ:

45· «Եւ ես ի Հայր, ասէ, եւ Հայր յիս»: Եւ արդ զիա՞րդ անքակն առաքէր յառաքչէն· եթէ ո՞չ յայտ է, եթէ առաքելութիւնն յայտնութիւն է· քանզի որ ի ծածուկն էր, եկն ի յայտ, երեւեցաւ: Ապա եթէ զառաքելութիւնն իբրեւ տեղեաց ի տեղիս ինչ փոխուսիկ առաքեցիկ ձեզ ցօրեան, զինի եւ եւզ»· յերկնի՞ց ինչ առաքելութիւն կերակրոցն կարծիցես, եւ ո՞չ զմարդասիրութեանն դարմանս, որ երկնաւոր ցաւդաւքն անուցանէ զպտուղս* երկրին: 230 ա
Եւ եթէ ցորեան եւ գինի եւ եւզ ոչ տեղիական փոփոխութեամբք առաքին, այլ յերկրէ եւ յերկրի են· եւ ասին, եթէ առաքին յայտնելոյն եւ երեւելով:

46· Ո՛րչափ եւս առաւել որ էրն յաչխարհի եւ չճանաչէր, յայտնեցաւ, զի ծանիցի· եւ այսիւ յայտ է, եթէ առաքելութիւնն ոչ այլ ինչ է, այլ զտեսչութիւնն յանձին ունել, ոչ առանց կամաց Հաւր եւ Հոգւոյ, քանզի մի կամք եւ մի ակն արկեալ ի միասին սուրբ Երրորդութեանն: Եւ երբեմն ասի, թէ Հայր առաքեաց զՈրդի· եւ երբեմն, թէ ինքն զինքն: Այլ յորժամ լսես թէ Հայր մատնեաց, զմիարանութիւն կամացն իմանայջիր: Եւ յորժամ լսիցես, թէ ինքն զինքն մատնեաց, զաղատական իշխանութիւնն նկատիջիր:

47· Ոչ մատնի իբրեւ զծառայ ի հարկէ, այլ մատնէ զանձն իբրեւ զազատ ինքնակամ: Եւ զերկոսին Պաւղոս յայտ առնէ· «Որ իւրում Որդւոյ, ասէ, ոչ խնայեաց, այլ փոխանակ մեր ամենեցուն մատնեաց»: Եւ մի նենգիցես, եթէ առաքչին միայն են չնորհք եւ ոչ առաքելոյն: Գրէ նոյն Պաւղոս Փիլիպեցւոցն, եթէ «Որ ի կերպարանն է Աստուծոյ, ոչինչ յափշտակութիւն համարեցաւ լինել

461 Ծոփ· ԺԳ· 28:
465 Ծոփ· ԺԶ· 32:
467 Ծոփ· ԺԳ· 10:
472 Ծոփ Բ· 19:
490 Հռոմ· Ը· 32:

հաւասար Աստուծոյ· այլ զինքն ունայնացոյց առեալ զկերպարանս ծառայի եւ ի նմանութիւն մարդկան լինել, եւ կերպարանաւք գտեալ իբրեւ զմարդ: Խոնարհեցոյց զինքն, եղեալ հնազանդ մահու եւ մահու խաչի»:* Տեսանե՞ս, զի ինքն զինքն խոնարհեցոյց եւ ինքն 231 ա
զանձն մատնեաց:

48· Եւ նոյն դարձեալ Պաւղոս ասէ, եթէ «Նմանողք եղերուք Աստուծոյ, իբրեւ զորդիս սիրելիս· եւ գնացէք սիրով, որպէս Քրիստոս սիրեաց զմեզ եւ եւ զանձն փոխանակ մեր»: Եւ այսպէս առաքելութիւն զարքայական տեսչութիւնն է իմանալ եւ ոչ ծառայական ինչ սպասաւորութիւն: Եւ զՅովհաննէ ասի, թէ «Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ»· եւ այսու զկարապետութեան մատակարարութիւնն իմանամք: Զի եթէ մարդ առաքեցաւ եւ տեղեաց ի տեղիս չփոխեցաւ, ո՞րչափ եւս առաւել Աստուածն առաքեալ անտեսական յայտնութեամբն եւ ի տեղեաց ի տեղիս ո՛չ փոխեցաւ:

49· Զայս ամենայն ասելով յայտ արարից, թէ զՏէրն եւ զարարիչ երկնից եւ երկրի առաքեաց Տէր եւ Հոգի նորա· այս ինքն վկայեաց հաստատեաց եւ եկն ճչմարտութեամբ, եւ էր առՀաւր հաւաստեաւ· եւ ոչ անաի որոշեալ եւ ոչ ասաի վրիպեալ: Քանզի որ առաքեցն մատակաց է եւ որ առաքեցաւն ըստ մարմնոյ նոյն չէր հեռի: Զայս ասել եւ ի սոյն խորհել մի՛ ի տարապարտ եթէ «լաւ է ընդ աղբ գալ ի տան Աստուծոյ առաւել քան բնակել յարկս մեղաւորաց»:

50· Այլ զազան գրգռեաց ած սատան*այ եւ հերետիկոսքն 232 ա
ծաղր առնէին, եթէ արջ գիմեաց յեկեղեցին եւ երկեցոյց: Աստուած առնէր, եթէ արջ գիմեաց յեկեղեցին եւ երկեցոյց: Աստուած յուք առ նոսա զԱստուծոյ բարբառն, եթէ «Պատահեսցէ նոցա արջ քաղցեալ»· Աստուծոյ բարկութիւնն· «եւ ի վայրենի գազանաց կեղեքեսցին»· ի սատանայական զաւրաց: Եւ ինքն հակառակորդն, որով խառնեացն խառնի· եւ յամբոխելն ամբոխի: Եւ չէն ինչ գործքն նոր, որ եւ պաւղոսի զվարդապետութիւնն ջանայր բառնալ անգամ ընդ մէջ հատանել, թող եթէ զմեր տկարաց: Այլ թէպէտ եւ ձեռնամուխ լինէր, սակայն յամաւթ լինէր: Եւ ի վերնատանն, յորժամ անկաւ պատանին ի պատուհանէն եւ մեռաւ· եւ ի խառնամբոխն, խառնիճաղանճն մէջն, ասէ Ղուկաս, եթէ մինչ ցայն վայր զնէին միտ, ապա ամբոխ արարեալ աղաղակէին, թէ բարձ զդա ի միջոյ:

496 Փիլիպ· Բ· 6—8:
500 Եփես· Ե· 1—2:
503 Ծոփ· Ա· 6:
515 Բ տրս:
518 Սապ· ՁԳ· 11:
520 Բ հերետիկոսքն:
523 Ովս, ԺԳ· 8:
524 համմս· Գարձ· Ի· 8—9:

© National Library of Armenia

51· Եւ մեք, եղբարք, առեալ զաներկիւղածական Քրիստոսի
խրախուսանաց զկնի, որ ասէր· «Քաջալերեցարուք, մի երկնչիք, ես
եմ»: Զի՞ երկնչիս· զԱստուած ընդ քեզ ունիս, որ զպատանեայ բե-
35 րանս կարկէ, եւ զհինի զաղաղակին հալածէ արզարութեանն ազե-
ղամբ: Այլ յԱստուած, ասէ, յուսամբ եւ դիտեմբ, եթէ կարէ ապ-
րեցուցանել է՛ւ ի հինէ, է՛ւ ի պատանեայ է՛ւ ի հրոյ եւ ի ծովէ եւ յա-
մենայն վշասուց, ուստի եւ կամի: Այլ ի մերոց մեղաց երկնչիմբ,
քանզի չեմբ արժանի Աստուծոյ փրկութեանցն: Եւ եթէ դիտես,
40 եթէ չես արժանի* Աստուծոյ, մի ի տեղւոջէ ի տեղի ի բարկու- 233ա
նէն վախչեցիս· քանզի ոչ եթէ որ ի տեղւոջէն վախչի, յԱստուծոյ
կարիցէ վախչել:

52· Ըստ այնմ թէ «յո՞վ երթայց յոգւոյ քումէ, կամ յերեսաց
քոց ես յո՞ վախեայց»: Մի վախչիր յԱստուծոյ, այլ վախատական
45 անկիր յԱստուած: Զի եւ զծառայ ոք, յորժամ տէր այր հրամայիցէ
դան հարկանել, եթէ խեղիցէ եւ անսատիցէ դանին, եթէ զի՞ մե-
ղայ, զի՞ յանցեայ, զի՞ ըմպեմ դան, աւելագոյն եւս զրգռէ զցա-
սումն տեառնն· եւ ապի, տանջանս յաւելու: Ապա եթէ յանձին
ունիցի, եթէ աւասիկ կամ, Տէր ես, իշխանութիւն ունիս, յա-
50 ծուցանէ զցասումնն եւ ապրի ի չարաչար տանջանաց· որպէս եւ
Գիրք ասեն, եթէ «պատասխանի ողոք դարձուցանէ զբարկութիւն»:
53· Այսպէս երբեմն եւ Աստուած առաքէր սպառնալիս Դաւ-
թի, թէ «դու արարեր զիրպէ ծածուկ· եւ ես արարից յայտնի եւ
առաջի արեգականս· եւ մատնեցից զտուն քո». եւ Դաւիթ անկեալ
55 յաղաչս, ունէր յանձին· նմանեալ բարերար ծառայի տուեալ պա-
տասխանի անդէն ի հանդիպի եւ յոստուոջ չարեացն, մինչ զեւս
յիւրմէ որդւոյն յԱբեսողոմայ էր ի հալածանս: Դարձուցէք, ասէ,
զծառայական Կատակարանաց Տեառն անդրէն ի տեղի իւր, զի եթէ
կամեսցի ընդ իմ եւ այց արասցէ, պարգեւ զմա երկիր անդէն ի
60 տեղւոջ իւրում· ապա եթէ ասասցէ Տէր, եթէ ոչ * կամիմ զքեզ, 234ա
«աւասիկ կամ, արասցէ զինչ եւ նմա հաճոյ իցէ»: Տեսանե՞ս, որ-
չափ պարտ եւ պատշաճ է ունել յանձին զբարկութիւն եւ ոչ ընդդէմ
դառնալ եւ անսատել:

54· Մի փախչիր ի տեղւոյ, այլ ի չար կարզաց· մի երկնչիր յե-
65 րազոց, այլ ի մեղաց: Քանզի բազումք ասեն. չար երազ տեսի եւ
չէիտեմ զինչ անցք անցանեն: Մի երկնչիր յերազոց, այլ ի մտաց ի
խղճից, եւ երազքն քեզ ինչ ոչ զլասեսցեն: Նա եւ զՅոր երկեցու-
ցանէին երազքն, սակայն սպանանել ոչ կարացին. «եւ երազով,
ասէ, զարհուրեցուցանես զիս»: Զի թէպէտ եւ խռովէին երազքն,
70 սակայն զլասել ինչ չկարէին. քանզի բարքն առանց մեղաց էին:

534 Մատթ. ԺԹ. 27: Մարկ. Ջ. 50:
537 Բ չուզի ի (հրոյ):
544 Սաղմ. ՃԼՀ. 7:
547 Բ մեղա, յանցեա:
551 Առակ. ԺԵ. 1:
553 Բ ծանուկ. ուղղած ծածուկ:
554 Բ. Թագ. ԺԲ. 12:

Զդայչ լեր ի մեղաց եւ մի ասեր, եթէ երազ չար տեսի· չարհաւք
եղեն, չար կեսաք· այս ամենայն մարդկան բաջաղանք են եւ
աւտարոտիք առ յԱստուածոյ: Սպառնայ Աստուած այնպիսեացն·
«լի եղեալ, ասէ, աչխարհ նոցա համայիւք իբրեւ զայլազգեաց»:
75 55· Այլ ոք յորժամ այգուց ի տանէ ելանէ եւ պատահիցէ մի-
ականոյ, ասէ· այս աւր չար աւր է· զի չար համայք ելին ընդ առաջ:
Եւ ընդէ՞ր արդեւք· յիւրո՞յ ինչ կամաց եղեւ այն, եթէ յարարչէն·
ի ծնէ՞, թէ ի ցաւոց ինչ կամ ի հարուածոց: Եւ եթէ ի խրատուէ,
ընդէ՞ր անդոսնես զխրատն. եւ եթէ ի ընտ եւ ի ծնէ, նա զի՞ մեղաս. 235ա
80 զի եւ ինքն իսկ ոչ կամէր զխեղուածինն: * Մի խորեր զայսպիսի
ինչ, այլ ի մեղաց զգուչասջիր: Կաղ, ասէ, ել ընդ առաջ· եւ կաղին
զի՞նչ վշաս իցէ· դու մի՛ լինիր կաղ յառաւուածպաշտութեան ճա-
նապարհին եւ մի զթասիցես ի ճշմարտութենէն եւ կաղն քեզ
վշաս ինչ ոչ առնէ: Զար աւր չա՛ր գործքն առնեն· եւ բարի՛
85 աւր՝ բարի՛ գործքն առնեն· յորմէ եթէ փախչել կամիցիս, ի մե-
ղաց զգուչասջիր:

56· Նաեւ այլ իմն, զոր պատկառեմ ասել եւ հա՛րկ է ասել:
Մի խականի, յորժամ ընդ առաջ ելանէ, խարե՛ն· եւ բազմէ պատա-
հիցէ, ուրախ լինին եւ երեւելի եւ խոկուն զաւրն համարին: Տեսա-
90 նե՞ս զչարիս հակառակորդին, զիա՞րդ ընդ դէմ ճշմարտութեան
կազմեաց զիւր զէնսն զառնութեան: Եւ եթէ զկոյս ոք կին ընդ առաջ
եւեալ տեսանիցէ, ի ճանապարհէ դառնայ: Եւ եթէ զժանտական,
զժանտագործ զաւրն նպատակաւ երեւելի կոչէ եւ իբրեւ զա-
րեաց իմն պատահաւս զառեցիկն յԱստուծոյ համարի: Եւ արդ
95 ընդէ՞ր խորհիցես զչնամիդ ճշմարտութեան. թէ քրստոնեայ
իցես, մի՛ խորեր այլ Քրիստոսի հաւանեաց, որ զխորհրդն խոստ-
իցես, մի՛ խորեր այլ Քրիստոսի հաւանեաց, որ զխորհրդն խոստ:

57· Եւ եթէ հեթանոս իցես, ընդէ՞ր ապիրատիս առ ի խորելդ·
ո՞չ դու ասես, եթէ հրամանք են եւ ճակատագիրք· եթէ հրամանք 236ա
եւ ճակատագիրք են, խորիցն զի՞նչ աւգտիցեն· զի զոր ինչ գամ
600 մի գրչին է գրեալ, զայն ոք չկարէ խափանել, եթէ խորիցէ եւ եթէ
ոչ խորիցէ: * Եւ եթէ խորիցես, խափանես խորանաւքն զճակա-
տագիրն եւ զհրամանն: Որ աւր ութ էր ամոյ ի ճանապարհ մի
երթիցաւք. եւ որ աւր ութեւտասն էր, մի ելցուք: Զի՞ բանրասես
զարարածս. ամենայն աւուրք Աստուծոյ են եւ չիք աւր չար. եթէ
5 չար գործս ոչ ունիցիս եւ եթէ գործքն բարւոք իցեն, ամենայն աւր
բարւոք է:

58· «Ո՞վ է, ասէ, մարդ, որ կամի զկեանս, սիրէ տեսանել զա-
ւուրս իւր ի բարութեան· լռեցո՛ զլեզու քո ի չարութենէ եւ զչըր-
թոյս քո, զի մի խաւսեսցի զնենգութիւն»: Եւ այլ իմն առասպելս
թունս քո, զի մի խաւսեսցի զնենգութիւն»: Եւ այլ իմն առասպելս

560 Բ. Թագ. ԺԲ. 25—26: Բ տեղոյ:
Հաճո:
569 Ծար. Է. 14:
573 Բ սպառնա:
583 Բ պապէս. կթաւիցես (՞):
594 Բ քրիստոնեա:
606 Բ լռեցոյ:
607 Սաղմ. ԼԹ. 13—14:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿական ССР
им. А. Мясникяна
© National Library of Armenia

խաւսին. չար, ասեն, ի չար ոչ մերձենայ. եւ մխիթարեալ լիմն անուշանեն զչարիսն: Եւ եթէ չար ի չար ոչ մերձենայցէ, ի փարաւոնն պիա՞րդ մերձեցաւ, եւ առ ի կարճել զԱստուծոյ նախանձաւորին ի նախանձուէ: Զուր, ասեն, սիրեաց, եւ զուր մի ատիր. այլ ես չըջեմ եւ ասեմ, եթէ զուր ատեաց եւ զուր մի սիրեր: Զի եթէ քեզ էր ինացեալ, առաքելոցն ե՞րբ քարոզէին, քանզի միշտ զուր ատեցան: Եւ գիտէին ասել թէ զուր մի սիրեր, այլ զուր ատեաց. զի որ վասն Աստուծոյն ատիցի, երանելի է:

59. «Երանելի է ձեզ, ասէ, յորժամ մատնիցեն զձեզ եւ նախատիցեն»: Զայս ասեմ, զի տեսանեմ զայս ամենայն յաճախեալ եւ զԱստուծոյ պատգամն մոռացեալ բազմաց: Հարց զայր քրիստոս- 237 ա
նեայ զառաքելոց ինչ բանս, զԱղամսո՛ց, եւ չգիտէ: Հարց զառաջնոցն * եւ զառասպելսց եւ զհրապարակական ինչ իրաց կամ զպատկերակերպ նկարուց եւ զոտնածել կաքաւչայց եւ մատամբքն զնուագսն [զնուագսն] յաւրինել, եւ տեսանես, զիարդ հմուտ է: Եւ այլ ոմն նստի ի հրապարակս եւ ասէ. այս աւր բարւոք է ձեռնառնել գործոյ. եւ միւսն ասիցէ, թէ չէ՛ բարւոք. եւ թողեալ զԱստուծոյ աւրէնսն համայից հաւատան: Այսպիսի գործք ե՛ւ յԱստուծոյ աւտար են ե՛ւ յԱստուծոյ ծառայից:

60. Եւ կամի՞ս ուսանել, զի սուրբքն ոչ խարէին եւ ոչ զհմայէին ինչ փոյթ առնէին: Պատահեցաւ Դաւիթ Ուռնայի եւ ասէ. Պարապեցո զկալղ քո եւ մատուցից զպատարագ Աստուծոյ. արծաթոյ տուր ինձ գնոյ, զի մի ոք ասասցէ, թէ թագաւոր է եւ հարուստ եւ բռնի հանէ զայլոց, ապայ արդար գինս եւ առնոյր: Եւ Ուռնիա ասէր. Մի ասէր, այլ ձրի իսկ ա՛ռ զհեղիղ եւ մատոյ պատարագ Աստուծոյ եւ լուիցէ Տէր ձայնի քումի: Եւ Դաւիթ ասէր. ո՛չ, քաւ լիցի. միթէ ինձ ասեցին ինչ սմա համարձն. զի Ուռնիա ասէր, Լուիցէ քեզ Տէր. եւ նա ասէր. ո՛չ: Եւ այնպիսի վտառս եղեւ նմա չխրեն, զի եւ հրեշտակ եւս եռես ի տեղւոջն:

61. Զայս ասեմք առ ի խափանումն հերձանոսական խարանացն. զի մի իբրեւ ընդհարման դուռն արկանիցէ ի ներքս թշնամին զհերձանոսութիւն, եւ ի փոքր կայծէ հրդեհս տարածանիցէ: 238 ա
Փախիր ի խարանաց եւ ի մեղաց եւ երթ զհետ արդարութեան, եւ եթէ ի հինէ կամիս փա*խչել, ապաչեա՛ զԱստուած սրբովք եւ սուտ. Մեղաք, առաջի կամք, բայց ի ձեռս քո եւ մի՛ ի ձեռս մարդկան: Նմանեա Դաւիթ, որում եւս գոյժ մարգարէն, եթէ «երիս հարուածս զնէ առաջի քո Աստուած. կամ զերիս ամս սով, կամ զերիս ամիս պատերազմ, կամ զերիս աւուրս մահ»:

617 Մատթ. ե· 11:
621 քրիստոսիկա:
628—641 հմմտ. բ. Թագ. իդ. 18—25:
631 բ պարապեցոյ:
639 բ ուռնիայ: բ մատոյ:
641 բ ռուռնիայ:
652 բ. Թագ. իդ 13:

62. Եւ Դաւիթ մտեալ ի վարանս, քանզի եւ ոչ մի ինչ ի գուժիցն էր դիւրական, զի ոչ քան զսով ինչ ծանրագոյն է. եւ ոչ քան զպատերազմ չար. եւ ոչ քան զմահ ինչ զժուար: Եւ թէպէտ պարտէր խրատել զյանցաւորն, սակայն եւ Աստուած եւ յանցանսն պատուէ զարդարութիւն. եւ տայր ըստ կամաց արդարոյն զընտրութիւնն. եւ ոչ որով չկամէրն, այլ որով կամէր այնու տանջէր: Եւ քանզի ակն առնուր, ասէ, արդարութեանդ, եւ զյանդգնութիւնդ պարտ է խրատել. երիս իբս զնեմ առաջի. զերիս ամս սով, զերիս ամիս պատերազմ, զերիս աւուրս մահ:

63. Տես զԱստուծոյ զարդարական զուգակշիռս, զիա՞րդ ընդերից ամաց սովոյն, զերիս ամիս պատերազմին կշռեաց. եւ ընդերից ամաց պատերազմին, զերիս աւուրս մահուն: Քանզի ծախէ մի ամիս պատերազմին, որչափ ինչ ծախէ մի սմն սովոյ. եւ մի աւր մահուն՝ աւելի քան զմի ամիս պատերազմի, եւ զմի ամ սովոյ: Եւ 239 ա
քանզի, ասէ, զոր կամիս մի ինչ յերեսացունց խնդրեա եւ արարից. ասէ Դաւիթ. նեղ եւ անճուկ է ինձ յամենայն կողմանց: Եւ թէպէտ իբրեւ զյանցաւոր կամէր փախչել ի խրատուէն, այլ քանզի* տեսանէր անհրաժեշտ զցասումն, ասէր. թէպէտ եւ յամենայն կուսաց նեղ եւ անճուկ է ինձ, այլ «լաւ լիցի անկանել ի ձեռս Տեառն, զի բազում են գութք նորա, եւ ոչ ի ձեռս մարդկան»:

64. Յանճն առնոյր զմահն. եւ զայս ոչ իբրեւ զարդար միայն առնէր, այլ իբրեւ զբարերար. եւ զի՛ յայտ արասցէ, եթէ ընդ հառնէր, այլ իբրեւ զբարերար. եւ զի՛ յայտ արասցէ, եթէ ընդ հաառնէր, այլ իբրեւ զբարերար. եւ զի՛ յայտ արասցէ, եթէ ընդ հաեթէ վասն զի թագաւոր ես եւ զամենայն ինչ չատ ունիս, վասն այնորիկ մատնեցեր զժողովուրն սովու: Եւ եթէ զպատերազմն ընտրեալ էր, կարծէին զաւրքն, եթէ ինքն անճնապրեցոյց եղեւ, զմեզ մատնեաց թշնամեաց. այլ խնդրեաց զանաչառական մահ: Ոչ իչխանաց աչառէր եւ ոչ չինականաց ողորմէր. զի ընդ ամենեցուն պատիժս եւ զիւր անճնն ի միջոց դնէ: Եւ վազվազակի զտահաւչեայ մարդասիրութեանն քարոզէ. եթէ «անկայց ի ձեռս Տեառն, որոյ բազում են ողորմութիւնք»: Եկն եհաս, ասէ, հրեշտակն Տեառն եւ սատակեաց յայգուէ մինչեւ ցվեց ժամ. եւ այն երկոտասանհերդէ մասն էր հարուածոցն, ընդ տիւս եւ ընդ գիչերս. եւ յամենայն ժողովրդենէն անկան հարիւր եւ քսան եւ հինգ հազար:

65. Իբրեւ եռես սատակացեալ զհարուածոնն, լինէր իբրեւ զծա- 240 ա
ռայ հնազանդ, Տեառնն նմանող, որ ասէրն, եթէ «ես եմ հովիւ

653 բ գժուար անընթեռնելի:
655 բ գնդրութիւնն:
666 բ կողման:
670 բ. Թագ. իդ. 14:
674 բ մակր, իմացիր մատնէր:
680 բ ի միջոս: զառհատաչեաս:
682 բ. Թագ. իդ. 14: բ է հաս:

© National Library of Armenia

քալ, եւ դնեմ զանձն իմ ի վերայ խաչանց իմոց». զի եթէ «ես հովիւս մեղայ, խաչինքդ * զի՞ յանցեան. եղիցի ձեռն քո յիս եւ ի տուն հաւր իմոյ»: Եւ քանզի զիւր զանձնն մատոյց հարուածողն ապրեցոյց զամենեսեան: Տեսանե՞ս, ունել ունէր զՅնաս անձին. ո՞րպէս դարձուցանէ զբարկութիւն, զի եւ զնա չտանջեաց. եւ ցհրեշտակն ասէ. Դարձո զսուր քո յաստուղ հարուածողն:

66. Զի եթէ զհրեշտակ սուսերաւոր զարձուցին աղօթք, մեք սրտի մտաւք թէ աղաչիցեմք, չդարձուցանիցէ՞ զսուրս հինի եւ թշնամեաց: Եւ զի մի յամբառական ինչ իրքն կարծեսցին, եցոյց նմա զհրեշտակն կատարիչ թռուցեալ սուսերը ի ձեռին եւ յայնմանէ իմացեալ զձգնական հրեշտակաց սպասաւորութիւն. ասէ. «Աբր-նեգ՛ք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզաւրք զաւրութեանց, որ առնեն զկամս նորա»: Եւ զիտաց Դաւիթ, զի թէպէտ ահաւոր է հրեշտակ, այլ զհրամանն կատարէ եւ ողորմել չիշխէ, այլ աղաչեաց զԱստուած եւ դարձոյց զսուր հրեշտակին:

67. Վասն այսորիկ եւ Մովսիսէ իմացեալ, եթէ չեն իշխան հրեշտակք անցանել ըստ Աստուծոյ հրամանն, յասելն Աստուծոյ, եթէ «ոչ ելանեմ ընդ ձեզ, այլ ահաւասիկ առաքեմ զհրեշտակ իմ ընդ ձեզ· ասէ Մովսէս, եթէ դու ընդ մեզ ոչ ելանիցես, ոչ ելանեմք աստի, հրեշտակ տաս, ասէ, ընդ մեզ, երկնչիմ ի հրեշտակէն ծառայէ, զաերունի ինչ չիշխել չնորհել: Եւ մեք եղբարք, իմաստուք, թէ չեմք ձեռնհաս յԱստուծոյ բարկութենէն փախչել· մի փախիցուք ի տեղեաց, այլ ի մեզաց. եւ պարապեսցուք զօրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում փառք յաւիտեան:

ՎԵՐՋ ՁԱՒԻՑՍ

Հրտ. Հ. Ն. Ակինեան

691 Յովհ. ժ. 14:
693 զի յանցեան ասկէ սկսեալ (թղ. 240ա—240բ) այլ գրչէ, մանր բոլորգիր:
694 հօր:
694 բ. Թագ. 17:
695 բ ունել ունել:
697 բ զարձոյ:
699 բ մտօք:
701 բ ձեռն.:
703 հզօրք:
704 Սաղմ. ձԱ. 20:
706 բ զարձուց:
710 հմմտ. Եւք ԼԹ. 2:
710 օրհնեցէք:
712 բ չիշխել իմացիր չիշխէ:
714 փախչել:

ՀԸՂՐԱՏԻ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԸ

Հաղրատի կալուածներու եւ հողերու մասին Յովհ. Ղրիմեցի կը գրէ՝ «Կալուածք Հաղրատայ կամ հող նորա ի բնէ անտի սեպհական նմա բովանդակապէս առեալ սահմանի ի հարաւոյ եւ յարեւելից կալուածովք գաւառին Ղազախու եւ ըստ մասին արեւելեան կողման զարձեալ կալուածովք Շինողայ, որ է գիւղ մեծ գաւառին Պօռչալուի: Ի հիւսիսոյ կալուածովք գիւղօրէից Զօլքանայ եւ Արծահանքին, որ Ախթալային կոչի: Իսկ յարեւմտից կուսէ կալուածովք Մարոյ եւ Ոռնակայ եւ Սանահնի գիւղից· եւս եւ կալուածովք Պղնձահանքին նորոյ, զոր Մատանն կոչեն:

Շրջապատ կալուածոյս Հաղրատայ ըստ ամենայն վերջին եղերայ նորա առեալ պարունակէ զտարածութիւն իրր չորեքտասան կամ հնգետասան ժամուց ճանապարհի հեռաւոր մարդոյ որ է շրջապատեալ ըստ մեծի մասին ի գօտեաց բարձրաբերձ, անառաւալից եւ ապառաժուտ լերանց եւ լինքն իսկ այս կալուած գիւղիկ բովանդակ բաղկանայ ի մեծամեծ լերանց եւ յանտառաց, ի ձորոց եւ ի ծորձորոց, ի բլրոց եւ յառապարաց· ուստի սակաւ սուրբք տեսանին ի նմա ատտ եւ անդ տեղիք ըստ ամենայնի հարթհաւասարք, բայց դիք ըստ ամենայնի հարթհաւասարք, բայց են ի նմա մարդաստանք յոլովք եւ անդաստանք իրրեւ չորս հազար օրավարաց եւ աւելի· Թէպէտ որք վաթինն յայժմ եւ աւելի· Թէպէտ որք վաթինն յայժմ եւ աւելի· Թէպէտ որք վաթինն յայժմ